

ալ: Այս ինքն է՝ նախ չորքոտանիք, ապա քաջուններ, ձկներ եւ ձու (26-7): Եթէ իմ այս դիտողութիւնը բացարձակ ճշմարտութիւն մը չէ, բայց եւ ոչ հաւանականութենէ հեռի է. եւ քիչ կը տարբերի արեւմտեայց Ա դարու կարգէն, որ ըստ Փիլլոնի կը կազմուէր ցամաքային, ջրային եւ օդային կենդանիներէ, — եթէ իրապէս այս էր ճաշակարգը, — բաժնուած եօթն եւ աւելի տեսակաց՝ որոնք նոյնքան սեղաններով յաջորդաբար տաճարը կը բերուէին (Փիլ. ճոք. 20):

1. Ուրեմն այդ հաշուով հայ կերակրոց առաջինն էին չորքոտանիք, եւ ասոնց մէջ նախամեծար կը համարուին վայրենիները՝ զորս կ'որսար նոյն ինքն կոչնական ազատանին, եւ ապա կը նստէր ուտելու (Փրպ. 26): Նա իւր նետից եւ սուրին առջեւ բաց ունէր Այրարատեան նահանգին մէջ՝ «զդաշտս մեծատարածս եւ որսալիցս, զլերինս... զհոծեալս էրէովքն... թանձրաթաղանթս, առոգագաւակս, սոնքացեալս գիրութեամբ» (նոյն, 22-3), որոց մեծերէն կը յիշուին այծեամն, եղջերուն, վարազն ու ցիւրը (նոյն, 26): Անուանի էին Կարնոյ լեռներն ալ՝ «լի երէովք» (Խոր. 256-7): Ու մեր դիպադեղն որսորդները մեծ ջարդ կու տային անոնց. այն-